

275), ինչպէս կ'ընէին ալ: Եւ Շնորհաւրին կէս դար վերջ դեռ կը հաստատէ ադոր շարունակութիւնը, թէեւ ոչ ամբողջ հայութենէն, ըսելով՝ թէ «Բագրուր ըստ նախնեացն սովորութեան ծումապահոչքեանը զաւուրսն զայնոսիկ անցուցանեն» (Ընդհ. 88): Ուրեմն արդէն կամաւոր դարձած էր պահեցողութեան այս ոճը, որ ինչպէս կը տեսնենք՝ բոլոր պահոց մէջ խստագոյնն էր, աղուհացէն ալ աւելի:

10. — Երասխայք: — Քրիստոնէութեան նախկին դարերուն՝ երբ չափահաս հաւատացեալք պիտի մկրտուէին, կանխաւ կ'ենթարկուէին կերակրոց ժուժկալութեան: Ասոր յիշատակութիւնք շատ կան Ս. Հարց գրուածոց մէջ (Կարբ. Բ, 2594, 2602-3): Հայ եկեղեցին տարբեր ընթացք չէր կարող ունենալ: Լուսաւորիչ գՀայս մկրտելէ յառաջ հրամայեց անոնց «ամսօրեայ ժամանակօք ի պահս եւ յաղօթս յամենալ» (Ագթ. 619): Ամիս մը տեւողութիւնդ հետաքրքրական է, մանաւանդ որ այսչափ ճշգրտած չէ ուրիշ ազգաց մէջ: Նմանապէս Ս. Վրթանէս իւր դարձուցած Հայերը դեռ չկնքած՝ «տայր ժամանակ սահմանեալ ապաշխարութեան» (Փաւս, 8). եւ պահքն անբաժան էր ապաշխարութենէն, ինչպէս պիտի տեսնենք քիչ յետոյ: